ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 943 - ԿԳ/Ի «26» սեպտեմբերի 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 9-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԿԱԶՄԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ՀՀ դպրոցականների շախմատի 9-րդ օլիմպիադայի կարգը՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Ստեղծել ՀՀ դպրոցականների շախմատի 9-րդ օլիմպիադայի կազմկոմիտե՝ համաձայն հավելված N 2-ի:
3. 2014թ հոկտեմբեր – 2015թ մայիս ամիսներին անցկացնել ՀՀ դպրոցականների շախմատի 9-րդ օլիմպիադան:
4. Նախարարության աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչությանը (պետ՝ Ա.Այվազյան)՝

   իրականացնել օլիմպիադայի ընդհանուր ղեկավարումը, <<Հայաստանի շախմատի ակադեմիայի>> հետ համատեղ համակարգել օլիմպիադայի կազմակերպման և անցկացման գործընթացին:
5. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ